

պէտք է որ ունենան իրենց պատմութիւնները զատ զատ: Պատմական այս գործերը շատ մեծ կարեւորութիւն ունին եւ ատոնց չգոյութիւնը բացարձակ պակաս յ'է մեր ազգային-եկեղեցական կեանքի ուսումնասիրութեան մէջ:

Եկեղեցիի պէս կազմակերպութիւն մը՝ իր ներքին եւ արտաքին բոլոր եղանակաւորումներուն մէջ, իր մատակարարական բոլոր յեղումներուն մէջ, հայեանակ գործ մը եւ կնիք ունեցող եկեղեցախօսական բոլոր կէտերու պահպանութեան մէջ պէտք է որ նկարագրուի եւ ներկայանայ. այսինքն՝ օգտակար եւ բազմակողմանի ծրագրով մը թէ երբ եւ ինչ պարագաներու մէջ շինուած է Եկեղեցին. որոնք շինած են, ինչ փոփոխութիւններ կրած է շէնքը, որոնք եղած են պաշտօնեաները (Քարոզիչ, Քահանայ, Երգիչ), աշխարհական ինչ տեսակ մարմիններ մատակարարած են Եկեղեցւոյ ելեւձուտքը, որոնք եղած են այդ մարմինները կազմող անդամներ. ինչպէս մատակարարած են ասոնք կամ ինչ ծառայութիւններ բրած են. Եկեղեցին ինչ կալուածներ եւ հասոյթի աղբիւրներ ունի. որոնք առած են զանոնք կամ նուիրած եկեղեցւոյն եւ ինչ նպատակով. Եկեղեցին ինչչափ կ'օգնէ իր շրջանակի կրթական գործին եւ փոխադարձաբար ինչչափ եւ ինչ կերպով կ'օգտուի իր օգնած գործէն. Եկեղեցւոյ պաշտօնեաները ինչպէս ապրած են, հիմակուանները ինչպէս կ'ապրին, ինչով կ'ապրին, եւն. եւն. եւն, ահա՛ հոյլ մը խնդիրներ:

Պատմութեան այս հետաքրքրական էջերուն քով պէտք է գնել եկեղեցւոյ արժէքաւոր արձանագրութիւններուն ու յիշատակարաններուն ամբողջը. Եկեղեցւոյ եւ յարակից շէնքերուն (նոյն իսկ կալուածներուն) յատկազօծերն (plan) ու լուսանկարները, ինչպէս նաեւ լուսանկարները գեղարուեստական հնութիւններուն (պատկեր, անօթ, սպաս եւ այլն):